

ԱՐՏԱՇԵՍ ԱՐԱՄ

**ԴԻՄԱԿՆԵՐԻ ԲԵՄ ԿԱՄ
ՀԱՍԱՐԱԿՆԵՐԻ ԹԱՂԱՄԱՍ**

(բանաստեղծությունների ժողովածու)

ԵՐԵՎԱՆ



ԱՐՄԱՎ, 2014

ՀՏԴ 891.981 - 1 Արամ

ԳՄԴ 84Հ - 5

Ա 830

Հրատարակվել է պետական աջակցությամբ

Խմբագիր՝ Արմեն Ավանեսյան

Արամ Արտաշես

Ա 830

**Դիմակների բեմ կամ հասարակների թաղամաս:
Բանաստեղծ. ժողովածու / Ա. Արամ.- Եր.: Արմավ, 2014. -
232 էջ:**

Գրքում զետեղված են Արտաշես Արամի նոր բանաստեղծությունները, որոնք մեր հակասական ժամանակների խորհուրդն են պատկերում:

ՀՏԴ 891.981 - 1 Արամ

ԳՄԴ 84Հ - 5

ISBN 978 - 9939 - 9107 - 2 - 7

© Արտաշես Արամ, 2014

© Արմավ, 2014

Եղիցի՛ բղխումն արտասուաց սովաւ վարժելոցն,
Եւ պարգևեալ տացի ի ձեռն սորին ապաշաւ ըղձից.-
Շնորհեսցի՛, Տէ՛ր, և զիս ընդ նոսին
Առ ի քե՛ն զղջումն կամաց...

Նուիրեսցի վասն ի՛մ այսու մատենիւ պաղատանք նոցին,
Եվ բանիւս այսու հեծութիւնք նոցին ընդ իմ խնկեսցին...
Եթե ելցեն ինձ բարեպարիշտք ընծայիլ սովաւ,
Ընկա՛լ կենդանեօքն վասն քո, գթա՛ծ, և զի՛ս ընդ նոսին:

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ. ՄԱՏՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ Բան Գ

ՆՈՐ ՃԱՆԱՊԱՐՅԻ ՍԿԻԶԲ ՎԱՂՎԱ ՔԵՐԹՈՒԹՅԱՆ

Բանաստեղծությունն ապրում է. քայլում է մարդու նման, նստում, պառկում, ուրախանում է, տխրում, թախծում, հետո բողբոջում է, ծաղիկ տալիս, կարկտահարվում ու ծաղկավիժում, սակավ բերք տալիս, կամ չի էլ տալիս, ի վերջո պատռում է հողն ու դուրս հանում կոկոն գլուխը՝ բացում է իր թերթիկները գույն ու բույր տալիս աշխարհին, բայցև կոխկրտվում խոզերի բոլուկի ոտքերի տակ:

Այս զգացողություններն անմիջապես համակում են Արտաշես Արամի բանաստեղծություններն ընթերցելիս: Գեղարվեստի այն հրաշք պայմանականությունը, որը փոխակերպման հնարավորություն է տալիս, զուգահեռվում է իրականությանը և բառերը հյուսվում են միմյանց թաց կավի խտությամբ:

Բանաստեղծն իրականության և պայմանականության միջև հավասարության նշան է դնում: Խոսքս վերաբերում է հատկապես Արտաշես Արամի պոետիկայի ուշագրավ հնարանքներից մեկին՝ իրականությանը հաղորդել պայմանական երանգ, պայմանականությանը՝ իրական գույներ: Սա սկզբունքային մոտեցում է բանաստեղծի համար թե՛ տողակառուցվածքում և թե՛ ընդհանրապես գիրք կառուցելու ձևապարհին:

*Իմ Հայրենիքի երկինքը ուրիշ
Շանթեր էր կրում իր շիկնած ծոցում:
Եվ մեր Սկիզբը՝ մաքրամաքուր իղձ,
Եղեգան ծուխ ու եղեգան բոց, ու*

*Մեր ողջ հույսը էն խենթ Մանկան վրա,
Որ ծառացել էր վիշապների դեմ:
Շրջվեցինք, գտանք մեր տունն ավերակ,
Հետո՝ երկվություն, հետո՝ թեր ու դեմ:*

Իրականության նկատմամբ բանաստեղծի վերաբերմունքն անհանդուրժողական է: Քաղաքական ենթատեքստը հատկապես սուր շեշտադրումներ է ստանում «Ծարավ հասկի պես կծղում է թուղթը» շարքում: Դրախտը ձանաչող բանաստեղծի համար մերօրյա իրականությունը դժոխային չարչարանքներ է բերում: Դրախտը՝ երկիրն է, հայրենիքը, օջախը, դժոխային չարչարանք է մարտի 1-ը («*Կանգնել ու / Անթարթ / իրար են / Նայում / Ժողովուրդն ու / Ժողովրդի վրա / Կրակողները: / Եվ այդպես / Մի՛ ամբողջ հազարամյակ*»), պատերազմները, դատարկված գյուղերն ու դռանը կողպեք կախած տները, չմշակված դաշտերն ու իշխանների մամռակալած դամբարանները: Եվ բանաստեղծը քաղաքի ամենաբարձր պատվանդանին քանդակում է 21-րդ դարի բռնապետի դիմարձանը, որն արդեն տրագիկ ու ծաղրական թատերայնության արտահայտություն է.

*ՈՆց է վախենում ինքն իր ստվերից,
ՈՆց է բաժանում **բախշիչ** ու **փեշքեշ**:*

*Թող աճպարարի բախտը միշտ բերի,
Բայց կարելի է վերքը չպճկել:*

Արտաշես Արամի գրքի ամենաշահեկան առավելությունն այն է, որ բանաստեղծը ճանաչելով այսօրեական կեղծ բարեպաշտությունը, թալանն ու սուտ հայրենասիրությունը, հատու տողերով և արտահայտիչ պատկերներով արձագանքելով դրանց, երբևէ չի ընկնում հոռետեսության գիրկը: Նա ունի ապագայի տեսիլքը՝ երկրի վաղվա բարօրության, և անվերապահորեն հավատում է այդ տեսիլքին: Հավատն է կերտում բանաստեղծություն, հավատն է ապրեցնում տողը և ի վերջո հավատն է վարակում ընթերցողի հոգին.

*Թող բաց ծով դուրս գա նավավարն էլի,
Թող վիատությունն իսպառ չքանա:
Կյանքը թող թվա ընծա՛ վերնային,
Գեղեցկությունը թող չանջքանա:*

Հանց հայկազուն տոհմի արժանավոր զավակ Արտաշես Արամը իր միայնության մեջ նույնանում է Երկրի հետ (Փոքր Մհերի միֆ), ու իր կենսագրությունն է կերտում բանաստեղծությամբ: Հետաքրքիր է, որ վերջին տարիներին հայ գրականության մեջ «ես»-ի արտահայտությունն այնքան եսակենտրոն է դարձել, որ կարելի է ասել 21-րդ դարի հայ գրականության հերոսը դարձել է բացահայտ ընդգծված «ես»-ը: Արտաշես Արամը շարժվում է հակառակ ուղղությամբ: Նա օտարվելով «ես»-ից դիմանկարների մի

ամբողջ շարք է ստեղծում՝ կոլաժային պատկերաշարք... Սա հոգիների յուրօրինակ փոխկանչ է «ես»-ի ներսում բնակվող անձանց հետ՝ Տոնինո Գուերա, Վահան Վարդանյան, Սոնա Վան, Ժիրայր Դադայան, Թեռլիկ Մակույան, Փոլեն Նեդայի, Իգնատ Մամյան և այլք: Այս ձոներգերում ներկա են նաև ընտանիքի անդամները՝ Շուշանիկ և Հասմիկ դուստրերը, Փառանձեմ քույրը, Լևոնիկ և Անջելի թոռնիկները և այլք:

Արտաշես Արամի նվիրումների այս հաճախությունը պիևդարոսյան ներբողի ժանրից չեն, սրանք բանաստեղծի ներանձնային ընկալումներն են և պայմանականության փոխակերպման հնարավորություն է տալիս փախչել մենությունից, և բանաստեղծը ձեռքից բաց չի թողնում սիրելի մարդուն տեսնելու, հանդիպավայրը կերտելու հնարավորությունը:

*Եվ քո մանկության դրվագներն են իմ
Աչքերի դեմով սահանցում, ցոլում:
Եվ քո ժպիտը՝ ծաղկած նուննի,
Եվ քո մատներից սաղափ է ծորում:*

*Խորության առջև քո ներաշխարհի,
Օտարի նման ակնածում եմ ես...
Իմ զարմանալի, իմ գերաշխարհիկ,
Քո կողքին անգամ կարոտում եմ քեզ:*

Կոլաժ-դիմանկարները հիմնականում մարդ-մարդ հարաբերությունների գեղեցկության զգայապատկերներ են:

Այդ հարաբերությունների մեջ ամենաաստվածային

ու արարչականը այր-կին սերն է: Սիրո նվիրումների մի ամբողջ շղթա է «Արեգակ աղջիկն այն քառսուն ձյուղ ծամ» շարքը: Այս շարքի յուրաքանչյուր բանաստեղծություն հագեցած է դրամատիկ հարուստ լիցքերով: Այրամարդու սերը փափկեցնում է նրա՝ բնությունից տրված վայրենի ու բիրտ էությունը, և նա դառնում է խոցելի, քնքուշ, նուրբ ու զգացմունքային:

Սիրո անպարագիծ լայնությունները լի են հառաչանքներով և բանաստեղծի յուրաքանչյուր հառաչանք դառնում է երգ, դառնում է ձոն, բառ ու պատկեր:

*Դու բարձրագույն էակ այս օրերում մթար,
Ճակատագիրն անսաց, և օրերից մի օր,
Մի լուսավոր ժամի հանկարծ ես քեզ գտա,
Հետո կորցրեցի, կյանք էր բանիվ միով:*

*Դեպի անհուն ձգվող վերջին խոյանքի թև,
Դու՝ վերջին սեր, վերջին՝ քնքշություն ու թախիծ:
Սիրտն իմ՝ ձաքեր կտա, ես դա հաստատ գիտեմ,
Եվս մեկ անգամ քեզ կորցնելու ահից:*

Արտաշես Արամի բանաստեղծություններում հատկապես ընդգծված է պատկերի տեսողական կառուցումը: Բանաստեղծն առաջնորդվում է բառի նկարչական վրձնահարվածներով: Պատկերայնությունը՝ համապատկերային չէ: Ընդհակառակը, այն ավելի շատ գույն ու գծի արժեք ունի, կոլաժային պատկերամտածողություն և գրեթե յուրաքանչյուր բանաստեղծություն կտավի նման է: Իսկ «Հարյուր և մեկ մանրանկար» շարքը հայրենի, քառյակի, հոբուի

և թանկայի խտությամբ կադր-կադր արագ անցումներով թերթում է պատկերաշարքը՝ հանց գեղանկարչական ալբոմ: Այստեղ ընդհանրացված են գույն ու գիծը, չկա որոշակիություն և մնում է նկարը, որտեղ գույնն ու գիծը կարևոր չեն:

Արտաշես Արամի «Դիմակների բեմ կամ հասարակների թաղամաս» բանաստեղծությունների ժողովածուն թարմ շունչ է հետխորհրդային հայ պոեզիայում: Իր արդիականությամբ և բարձրացված հարցադրումներով, միևնույն ժամանակ հստակ տաղաչափությամբ, իր նորարարական շնչով և լավագույն ավանդների պահպանման գիտակցումով, թերևս նոր ճանապարհի սկիզբ կարող է լինել մեր վաղվա քերթության:

Արմեն Ավանեսյան

(Բանասիրական գիտությունների թեկնածու)



ԾԱՐԱՎ ՀԱՍԿԻ ՊԵՍ
ԿԾՂՈՒՄ Է ԹՈՒՂԹԸ

Պատուհասվո՛ւմ ենք, բայց դա՛ս չենք քաղում,
Կպատուհասվե՛նք, բայց դա՛ս չենք քաղի:
Նույնությամբ և նույն հատվածն ենք խաղում,
Կյանքը վերածած կրկնվող խաղի:

Արժեզրկվել է ամեն մի արժեք,
Եվ պանծացվում է գինը ապրանքի:
Կարիք չկա միտք և ուղեղ շարժել,
Կա ժամանակ, երբ բնազդն է հարգի:

Եվ ժամանակի հողմերն անխուսափ,
Մեր երկվությունն ու անդունդը մոտիկ:
Անխնամ՝ ածու, աննշան՝ խոզան,
Ոչ՝ կամք, ոչ՝ խարի՛սխ, ոչ՝ փրկագոտի:

28. 08. 2013

Քանդակազարդ քի՛վ, կամարներ՝ առկախ,
Ուխտավորների ուսերը նկուն:
Կածանին՝ ոտնահետքերը կարկամ,
Ցածու՛մ խենթացած գե՛տն է աղմկում:

Խոնարհ կանգնել է Աստծո գառն այն,
Գլխավերևում՝ մեղսակիր հոգին:
Այ թե խոսքն այնքա՛ն զորավոր դառնար,
Որքա՛ն՝ Հերացու ձեռքերն ամոքիչ:

Գառն արդեն չկա՛: Մայունն անհասցե
Ձուլված դռներին Անդրաշխարհի:
Մեղքը ներվա՛ծ է: Աստված արասցե,
Որ ներվե՛ն բոլոր մեղքերն աշխարհիկ:

08. 08. 2009

Իմ Հայրենիքի երկինքը ուրիշ
Շանթեր էր կրում իր շիկնած ծոցում:
Եվ մեր Սկիզբը՝ մաքրամաքուր իղձ,
Եղեգան ծուխ ու եղեգան բո՛ց, ու

Մեր ո՛ղջ հույսը էն խենթ Մանկան վրա,
Որ ծառացել էր վիշապների դեմ:
Շրջվեցինք, գտանք մեր տունն ավերակ,
Հետո՝ երկվություն, հետո՝ թեր ու դեմ:

Իմ Հայրենիքի երկինքը բազուկ
Շանթեր է կրում իր շիկնած ծոցում:
Բայց գաղափարը հույլ ու ազազուն
Հին սխալներն է մեր սրբագործում:

06. 05. 2009

ՆԱՐԵԿԱՅԻ

Քանդակագարդ կամարներն ու էն վիթխարին,
Տիեզերքի արտացոլքն է աչքերի մեջ:
Հզորագա՛րմ, բայց իր խղճի՛ն հավետ գերի,
Մաքուր ոսկով եզրագծեց ամեն մի էջ:

Էն աստղային տարիները, և ոչ մի քայլ
Չի՛ հեռացել մարդը վայրի իր բնույթից:
Ինչպես, ինչպես չավաղես ու չմորմոքաս,
Մարդը ոգուց երես թեքած, կառչած նյութին:

Մարդն ինքն իրեն պիտի գտներ թուիչքի մեջ
Եվ ձախրանքում ինքն իր վարքը մաքրագործեր,
Սակայն թևա՛տ, վիա՛տ ու խե՛ղձ,
Դեզերում է հագին ծանր մեղքի քրծեր:

Ոսկեբանված զարդակամա՛ր: Էն Վիթխարի՛ն
Խոչուխութերն է հեռացնում մարդու ծամփից,
Եվ մեղքերի քավարանից իբրև խարիսխ,
Բարձրանում են մարդու սերն ու խիղճը անբիծ:

* * *

Պոռոշյան իշխանների
Տոհմական դամբարանը
Ուզում է դո՛ւրս պրծնել
Քարաքերծերի մռայլ բանտից,
Արև՛ է փնտրում:
Ժամանակի չերևացող հատվածը
Մամուռ է կապել,
Եվ ներկայի ունայն
Որմնախորշերում
Ծվարել է
Հայ մարդու
Կորուստներով լի,
Ծանր հիշողությունը:

03. 05. 2013

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՍԿԻԶԲ ՎԱՂՎԱ ՔԵՐԹՈՒԹՅԱՆ 5
(Արմեն Ավանեսյան)

ԾԱՐԱՎ ՀԱՍԿԻ ՊԵՍ ԿԾՂՈՒՄ Է ԹՈՒՂԹԸ

Պատուհասավորւմ ենք, բայց դա՛ն չենք քաղում	12
Քանդակազարդ քի՛վ, կամարներ առկախ	13
Իմ Հայրենիքի երկինքը ուրիշ	14
ՆԱՐԵԿԱՑԻ	15
Պոռոշյան իշխանների	16
Կյանքը փոխվում է կանգուն առ կանգուն	17
Մրսած դեմքերն են քայքայվում ինչպես	18
21-ՐԴ ԴԱՐԻ ԲՈՒՆԱՊԵՏԻՆ	19
ԳԼՈՒԲԱԼ ԱՌՃԱԿԱՏՈՒՄ ԿԱՄ ՀԱՅՎԱԿԱՆ ՊՈՐՏԱԼ	20
Մեռած պահերի քարացած շարքեր	21
Տևական տագնա՛պ, ծիգե՛ր ապարդյուն	22
Սեր անվանյալը լքյալ ու անուժ	23
Սև եռանկյունի՛ն, քառանկյունը գորշ	24
Ոգի՛: Ոգեղե՛ն: Հող և հականյութ	25
Ցա՛վը: Ցնցվո՛ւմ է ցնորքը ցանցկեն	26
Չանակացուլ տա՛պ, շիկակարմիր լո՛յս	27
Դո՛ն Կիխոտի բեղի՛ն՝ ծաղկափոշի	28
Տոթը՝ տրոփում, կաթում է թուփը	29
Պաղ պսպղում է գամը օձորքին	30
Փշե պսակն ու լապտերիկ մի հույլ	31
Արտոնյալների քրքիջն է պայթում	32
Ամուլ ամայություն, համատարած հեղձո՛ւկ	33
Հեռավոր մութի կաղկանձը, կուպե՛ր	34
Դժգո՛հ է քահանան, դժգոհ է անթաքույց	35
Կաշկանդված մարմին և մոլոր հոգի	36
Ամայի քաղաք, փողոցներ դատարկ	37

Հոշոտվող զոհի հուսահատ կաղկանձ	38
Խժոռնւմ են, լափոնւմ քափ-քրտինք մտած	39
Քանի՞ դար անցավ և քանի՞ տարի	40
Թորոսից Թորոս՝ չարչարանաց երթ	41
Անվավեր տեղանք, քողարկված ակնատ	42
Կլավեսինի տակտերը թավշե	43
Ողջը մսխվեց: Փշրանք ու կրճոնք	44
Թող բաց ծով դուրս գա նավավարն էլի	45
Տիեզերքը սև խորշերով լեցուն	46
Ցրտե՛ր կան, որոնց ժամանակ անգամ	47
Ինչ-որ տեղ ամուր գրկել են իրար	48
Հեռացիր անձայն, ձուլվի՛ր եթերին	49
Նույն հե՛նը ժպիռի, նույն ավարառո՛ն	50
Անհեռանկար, անհրապույր օր	51
Սիրտը սրտին է փնտրում ցավակե՛զ	52
Մի ողջ երկիր՝ որսացանցում	53
Սև նավահանգիստ, կարմրազգեստ խանում	54
Պատրանքով թափուր օրերն օրորել	55
Ըեղ շառավիղը ծա՛նր հայացքի	56
Անհայտին ձգտող ինչ-որ ուղի՛ղ, կո՛ր-	57
Դարձյալ սեղմվո՛ւմ է Ծագրենի կաշին	58
Ցնծում են Ցեղի թարխանները ցոփ	59
Լույսը սակավ է, ջերմությունը՝ սուղ	60
ԱՌԵՐԵՎՈՒՅԹ	61
Սասնա լանջերին ծաղկել է ձյո՛ւնը	62
Ուզեցիր երգել եղեգնյա գրչով	63
Սրտի թույլ բաբախ, խուլ երակազարկ	64
9-Ը ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2009 Թ.	65
Մեռյալի ջանքը՝ մի ո՛ղջ աշխարհ	66
Ծարավ հասկի պես կծղում է թուղթը	67
Հագին՝ քաթանե, երկար բալախոն... ..	68
Էլեկտրալարեր: Ըեկ պղնձի վազք	69
Կպչո՛ւն, հարաճո՛ւն, անփոփոխ, անծի՛ր	70
Սև թռչունների սարսափահար չու	71

Ծփարկելու է ծավալը ծանծաղ	72
Գոռ գայլիկոնը եռանդով անբավ	73
Ոչ՝ խաչելություն տանող Գողգոթա	74
Անվախձան ուղի և ձամփա հողե	75
Աչքաթող արված ինչ-որ նրբանցք	76
Հուշը հեռավոր շքահանդեսի	77
Ծահի՛, շվայտությա՛ն մրցավազքը այս զե՛խ	78
Դիմակների բե՛մ: Ինչ-որ՝ կարկատան	79
Ծիրանի թիկնոց, խունացան քրձեր	80
Կինը ննջո՛ւմ է, տիկնի՛կն է նիրհել	81
Աջնան գիշերն ահա տարածվում է դանդաղ	82
Հին ագահության հաղթարշավը նոր	83
Մարդամո՛տ, մարդախո՛յս, օտարվա՛ծ	84
Թաց ձյուղից կառչած ծնձղուկն է ձոձվում	85
Գիշեր: Լուսոթյո՛ւն: Ծունը չհաչե՛ց	86

ՈՐՄԼԱՆԿԱՐԻ ԽՈՐԱՑՈՂ ՃԱՔԵՐ

Խելագարների վազքը խավարում	88
Խենթ ու լանջաբաց հուրիների երթ	89
Թաց այգում կնոջ հին մարմնաքանդակ	90
Հնոցապանի նման զօրգիշեր	91
ՏՈՒՒՆՈ ԳՈՒԵՐԱ	92
Այդպես տերևը ընկնում է ծառից	93
ՃԱՊՈՆՈՒՀԻՆ	94
ՋՈՒԹԱԿԱՀԱՐՈՒՀԻՆ	95
Արև են ըմպում փողոց ու քույա	96
Ծովի հատակում՝ խեցեմորթ մի կույր	97
ԳԻՆԱՐԲՈՒՔ	98
Տրոհվող մարմին, սլացք ոգեղեն	99
Երկնքի քիվին կանգնած, հսկում են	100
Մահվան անխոտոր միտքը իրենից	101
Ժամանակի փոշի՛ն, ժամանակը՝ փոշի	102
Կյանք ասվածը, որ թվում էր պարզ	103

Խոնված ամբոխ: Հայացքներ տարտամ	104
Սիրտը անհայտից բաժանող միջնորմ	105
Էն գիշերը՝ կոնյր և դու՝ լուսավոր	106
Այս հողը մերն է, ինչ էլ պատահի	107
Աստղը ծչում է, ձայը՝ ծառագում	108
Ժպտալ ցավի միջից, սատար դառնալ բարուն	109
Ինչ են ցուցանում խորշոմները հեզ	110
Սիզախոտ, քամի՛, ինչ-որ շիրմաթումբ	111
Պատմություն, որտեղ կերպարներ չկան	112
Շամանդադի մեջ մրսում էր շունը	113
Հոն է, կարոտ է, գուցե հիա՛ցք է	114
Մարդու մարմնի պես շնչում է կավը	115
Թե սահմանը մոտ է, հատի՛ր	116
Քեզ գեղեցկության աստվածն է սիրել	117
Ամեն ինչ մի կողմ ձգիր	118
Դու սև հեջաբով էիր	119
Բան չմնաց, Տեր իմ, բան չմնաց	120
Մղձավանջ: Եվ քո ջանքերը համառ	121
Հավերժից հոգնած լեռան կատար	122
Ցավը՝ զսպված, թախիծը անզուսպ	123
Մի քիչ հավատալ, կասկածել մի քիչ	124
ՖՈՒԵՆՏԵ ՎԱԿՐՈՍ	125
Հայր Աբրահամին նայող գառան	126
Ոչ ոք չի՛ գալու: Գինի՛ և ներո՛գ	127
CURRICULUM VITAE	128
Արար առաջին: Թող վայրի կատուն	129
Ինչ է հարկավոր, մի՛ դուռ՝ մի՛ ձամփա	130
ՕԴ, ՋՈՒՐ, ԿՐԱԿ	131
Մութ է կուլ տալիս կատուն անոթի	132
Ֆ. Դստոնսկին Սանկտ Պետերբուրգի	133
Լուսավոր ծաղա՛տ, դեմքեր անդիմակ	134
Անքննելի է կամքը վերնային	135
Ո՛ր չարը դրդեց, որ բառն ընտրեի	136
Մշուշը կայծկլտա՛ց: Երեսաներ անցան	137

Ծանր մի պահի բույրը նշենու	138
Ծանրաբեռ ևս մի շաբաթ անցավ	139
Ամպրոպը շաչեց: Ճաք տվեց որմը	140
Այնպես գեղեցիկ ու հեշտ էր մեռնում	141
Քո երկրում օտա՛ր ես	142
Հնչեց երկնքի սուպրանոն զնգուն	143
Հուսա՛: Հուսալուց դյուրին բան չկա	144
Լինել, թե չլինելը	145
Քեզ վիճակված են թոխչքներ ընդհատ	146
Վառվիր, գեղեցկություն, թե ուզում ես տևել	147
ORDALIUM	148
Գալու է մեկը, գալու է վստա՛հ	149
Հեռու անապատում մի մանուկ էր լալիս	150
Բանաստեղծները գնում են հանկարծ	151
Փողոցն ամառվա կիզիչ լույսի տակ	152
Այդ ծիծաղելի խխունջը՝ սիրտը	153
Մարող ոտնաձայն, հեռացող ձայներ	154
Ապրեցիր այսքան՝, ապրեցիր կարծես	155
Լույսը մեղրի պես ծորում է թել-թել	156
Լուսեղեն պահե՛ր, կիսախավար կյա՛նք	157
Աստղերը, ձյունը, արևը, քամին	158
Տրորված տարածք, մացառ ու թմբիր	159
Մուշեղ Գալշոյան	160
ՓՈՔՐԻԿ ՏՂԱՅԻ ԵՐԳԸ	161
Որմնանկարի խորացող ձաքեր	162

ԱՐԵԳԱԿ ԱՂՋԻԿԸ ԱՅՆ ՔԱՌՍՈՒՆ ԺՅՈՒՂ ԾԱՄ

Մոլորված հավքեր, ուշացած ձնհալ	164
Մոռացված խորշեր, սև փառ ու կատու	165
Փայլատ սփռոցին ստվերը ջահի	166
«Կզանգեն»։ Չեն զանգի, դու չկա՛ս	167
Հուլիսյան երկինք, որ հիշեցնում է	168
Ոչ խորհրդավոր ընթրիք ու զրույց	169

Ո՛վ է տուն դառնում օտար ավերից	170
Աղջամուղջի մեջ սրահ սյունագարդ	171
Քո ձայնը աղոտ լույսի հայտանիշ	172
Արագածը ձյունել, սառցե ծաղիկ դարձած	173
Արծաթե լճակ և ոսկեձյուղ ծառ	174
ՓԱՐՎԱՆԱ	175
Ծաղկագարդ քղանցք, սքողված ծունկեր	176
Սե՛ր էիր երգում հիմարաբար	177
Վայրը անհայտ էր, սրահը՝ ծանոթ	178
Գրի՛ր և լցրու դատարկությունը	179
Մեկը կար սրտում սերը նորահաս	180
Այսպե՛ս: Այսքա՛նը: Դո՛ւ և քո հեռուն	181
Լուսավոր հետքեր վրձնահարվածի	182
Երկնքի սի՛րտը: Ծառե՛րը դալար	183
Ծովախո՛րշը: Ավա՛զ: Գլաքարեր ողո՛րկ	184
Մարմինը թողած, հոգի՛ն էր կոփել	185
Ժամը հասավ կարծես, և հնչեցնես պիտի	186
Բառը հասկի պես ռիթմով շրշում է	187
Բացօթյա ընթրիք, դատարկ մրգաման	188
Կիսակամարն ու վանքի մուտքը հին	189
Մրսած հրեշտակ, հրեշտակ հիվանդ	190
Ջի՛նջ, կամարա՛ձև կիրակի, կորե՛ր	191
Քո պատանության օրերի շուկան	192
Ախտին, ձանձրախտին դիմակայելու	193
Ածաթե լուսին և զնգուն գավաթ	194
Կհանդիպենք մի օր խաչմերուկում այս նույն	195
ԵՐԿՈՒ ԵՐԳ ԳԱՅԱԼԵ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆԻՆ	196
Մշուշն աչքերիդ: Քաղա՛քն է թեթև	198
 ՀԱՐՅՈՒՐ ԵՎ ՄԵԿ ՄԱՆՐԱՆԿԱՐ	199

ԱՐՏԱՇԵՍ ԱՐԱՄ
ԴԻՄԱԿՆԵՐԻ ԲԵՄ
ԿԱՄ
ՀԱՍԱՐԱԿՆԵՐԻ ԹԱՂԱՄԱՍ
(բանաստեղծություններ)

АРТАШЕС АРАМ
СЦЕНА МАСОК
ИЛИ
КВАРТАЛ ПРОВАКОВ
(СТИХИ)

Խմբագիր՝ Արմեն Ավանեսյան
Ձևավորումը՝ Արմինե Քոչարյանի
Համ. շարվածքը՝ Քրիստինե Հովսեփյանի
Գրքում օգտագործված են հեղինակի կոլաժներից

Չափսը՝ 60x84 1/16:
Թուղթը՝ օֆսեթ 70գ/մ² 1.8 ծավալային կշիռով:
Ծավալը՝ 14.5 տպ. մամուլ:
Տառատեսակը՝ Ghabuzian Tigran:
Տպաքանակը՝ 400:
Տպագրվել է «Լևոն Մարգարյան ԱՁ» տպագրատանը:
Հասցե՝ ք. Երևան, Մայիսի 9 փ. տ. 23:
Գինը պայմանագրային:



ԱՐՄԵՎ

հրատարակչություն

Ք. Երևան, 16 ք. 18 / 94
հեռ.՝ (+374) 10-34-73-35
էլ.փոստ՝ armav-hrat@mail.ru